

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՑ ՈՍԿԵԴՐԱՄՆԵՐՈՒ

*Չօնուած իմ բարեկամ Չարեհ Պարուկեանին,
որ անխոնջ կերպով փորձեց յայտնաբերել
բոլոր հայ ոսկեդրամները եւ գեղեղնել
իրաքանչիրը փարբեր քանգարան մը:*

ԵՂԻԱ Թ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

Ռուբինեան Հարստութեան ոսկեդրամները հմայած են բոլոր հայ դրամագէտները: Արդարեւ, կիլիկեան հայոց ոսկեդրամները կը ներկայացնեն հայ դրամարուեստին զագաթնակէտը: Այդ ոսկեդրամները չափազանց հազուագիւտ եւ թանկագին են: Իւրաքանչիւր հաւաքորդի երազն է ունենալ հայ ոսկեդրամ մը:

Առաջին անգամ կիլիկեան հայ ոսկեդրամ մը յայտնաբերուեցաւ 1850ին, երբ Վիքթոր Լանկլուան հրատարակեց Կոստանդին Ա. (1298—1299) թագաւորին ոսկեդրամը իր յղուածներէն մէկուն մէջ¹, ապա 1855ին նոյնը վերատպեց իր գիրքին մէջ²: Սխալմամբ, Լանկլուան այս ոսկեայ դահեկանը վերագրած է Կոստանդին Դ. (1345—1363?) թագաւորին: Նախապէս, այս ոսկեայ դահեկանը կը պատկանէր Էգաճի Պետրոս Մարգար Ալիշանին՝ համբաւաւոր Հայր Ղեւոնդ Ալիշանին հօրը³: 1835ին Կոստանդին Ա. թագաւորին այս ոսկեդրամը ճամբորդեց Վենետիկ⁴: Այսօր այս գոհարը պարծանքով կը ցուցադրուի Վենետիկի Ս. Ղազարու Մխիթարեան Թանգարանի ժողովածուին մէջ:

Կիլիկեան ոսկեդրամի մը յաջորդ նկարագրութիւնը լոյս տեսաւ Կիւսթաւ Շլումպերժէի կողմէ, 1881ին⁵: Շլումպերժէի ոսկեայ դահեկանը, վերագրուած Լեւոն Ա. (1198—1219) թագաւորին, մէկ առիւծով ոսկեդրամ մըն է եւ պատկերատիպով կը նմանի Լեւոնի կէս երկդրամին: Յետոյ, Շլումպերժէ այս ոսկեայ դահեկանը իր հայկական դրամներու ամբողջ հաւաքածոյին հետ նուիրեց Փարիզի Ազգային Մատենադարանին:

Հայր Ղեւոնդ Ալիշան հրատարակեց երեք հայ ոսկեդրամ 1885ին: Ասոնցմէ մէկը, Կոստանդին Ա. թագաւորին վերագրուած, Պետրոս Ալիշանի ոսկեայ դահեկանն է⁶: Միւս երկուքը Լեւոն Ա. թագաւորին ոսկեդրամներն են՝ մին երկու առիւծով՝ եւ վերջինը՝ մէկ առիւծով, Շլումպեր-

ժէի նմուշը⁸։ Լեւոն Ա-ի կրկնաուիժ ոսկեայ դահեկանը նուիրուած է վենետիկի Ս. Ղազարու Մխիթարեան Թանգարանին Սերովբէ Ալիշանի կողմէ՝ Հայր Ղեւոնդ Ալիշանի եղբայրը⁹։

Հայր Կղեմէս Սիպիլեանի դասական գիրքը, նուիրուած՝ ուրբինեան դրամներուն, հրատարակուեցաւ 1892ին¹⁰։ Դատելով իր գիրքին պարունակութենէն եւ Շլումպերժէի գրականութենէն, 1875ին Սիպիլեան ծանօթ էր միայն Կոստանդին Ա. Թագաւորի ոսկեայ դահեկանին, զոր ինք նկարագրած է իր գիրքին մէջ։ Հայր Գրիգորիս Գալեմքեարեան, Սիպիլեանի գիրքին խմբագիրը, աւելցուցած է այն ատեն գոյութիւն ունեցող կամ իրեն ծանօթ եղող ուրբինեան բոլոր ոսկեղրամներուն բաւական ընդարձակ ցանկը¹¹, որ կը պարունակէ տասներեք ոսկեղրամներ։ Գալեմքեարեան նաեւ տուած է Հայր Սիմոն Անտոնեանին ուղղուած Սերովբէ Ալիշանի 24 Դեկտեմբեր 1885ին ամակին եւ իրեն ուղղուած Սերովբէ Ալիշանի թղթակցութենէն հատուածներ¹²։ 1936ին Կարապետ Յ. Բասմաջեան այս ցանկին վրայ աւելցուցած է երեք ոսկեղրամներ եւս, թիւը բարձրացնելով տասնվեցի¹³։ Յետագային Կոստանդին Ա. Թագաւորի ոսկեայ երկրորդ դահեկան մը յայտնաբերուած է Իսթանպուլի Հնագիտական Թանգարանի հաւաքածոյին մէջ, կիլիկեան հայ ոսկեղրամներուն թիւը հասցնելով տասնեօթի¹⁴ (տես՝ աղիւսակ 1)։

Զարեհ Պտուկեանի նուիրումը դէպի հայ դրամագիտութիւն այնքան անսահման էր, որ ինք անձնական մարտահրաւէր մը համարեց իւրաքանչիւր հայ ոսկեղրամի հետապնդումը եւրոպական ցամաքամասին վրայ։ Անձամբ ճամբորդեց եւրոպական երկիրները, թափառեցաւ փողոց առ փողոց իւրաքանչիւր հաւանական հասցէի, փնտռելու, յայտնաբերելու եւ արձանագրելու գոյութիւնն ու տեղադրումը հարազատ օրինակներու¹⁵։ Անձամբ քննեց հայ ոսկեղրամներուն վերաբերեալ հրատարակուած բոլոր գրականութիւնը եւ ամփոփեց իր եզրակացութիւնները բազմաթիւ յօդուածներու մէջ հայերէն ու անգլերէն լեզուներով։ Իրրեւ արդիւնք իր հետազօտութեանց, տասներկու կտոր ոսկեղրամներ¹⁶ ճանչցուած ու դասաւորուած են։ Շնորհիւ իր կորովի աշխատանքին ու անձնական զոհողութեանց, 1984էն ի վեր, հայ ոսկեղրամներ պահպանուած են յաւելեալ երկու թանգարաններու մէջ (աղիւսակ 2, Լ-ա եւ Լ-գ)։ Այս մասին վարը աւելի մանրամասն պիտի տեղեկագրուի։

Կիլիկեան Հայաստանի Դրամները գիրքին մէջ, Պտուկեան դասաւորած է տասնմէկ ոսկեղրամ։ Աւելի ուշ, սոյն գիրքի բարեփոխուած անգլերէն հրատարակութեան մէջ ան տասներկուքի բարձրացուցած է ոսկեայ դահեկաններուն համրանքը։ Ահա անոնք՝

Թիւ:	Տիրակալ	Դրամի տիպ	Դիտողութիւններ
1.	Լեւոն Բ.	Նոր դրամի տիպ	Հ. Փիլիպոսի քով, Բերայի 1831ի հրդեհին փճացած:
2.	Կոստանդին Ա.		Պատկանած Պետրոս Մարգարի, հիմա՝ Վենետիկ՝ Ղազարի թանգարան:
3.	Լեւոն Ա.		Պատկանած Ճանիկ Ամիրայի:
4.	Լեւոն Ա.		Կեսարիոյ վանականի մը քով:
5.	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	Սերովբէ Ալիշան նուիրած է Վենետիկի Ս. Ղազարի թանգարանին:
6.	Լեւոն Ա.	Մէկ առիւծ	Կիւսթաւ Շլումպերֆէլի սեփականութիւն:
7.	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	Գտնուած Կեսարիայէն, Ռոլէն հաստատութեան կրկին վաճառուած:
8.	Լեւոն Ա.		Ռոլէն հաստատութեան քով, Փարիզ, թերեւս Կեսարիայէն:
9.	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	Պոլսեցիի մը սեփականութիւն:
10.	Հեթում-Լեւոն		Վենետիկի Ս. Ղազարի թանգարանին մէջ:
11.	Լեւոն Ա.	Մէկ առիւծ	Փարիզի Ազգային Մատենադարանին մէջ:
12.	Հեթում-Լեւոն		Թիւ 10ի նման:
13.	Լեւոն Ա.	Մէկ առիւծ	Փարիզի Ազգային Մատենադարանին առաջարկուած, բայց չէ գնուած թիւ 11ին նման ըլլալուն համար:
14.	Լեւոն Ա.		Ռոլէնի մօտ:
15.	Լեւոն Ա.	Մէկ առիւծ	Նշան Գալրպեանի հաւաքածոյին մէջ, ապա՝ Գ. Պաղտատեանի հաւաքածոյին մէջ:
16.	Լեւոն Ա.		Հայկազն Հապէշեանի հաւաքածոյին մէջ:
17.	Կոստանդին Ա.		Իսթանպուլի Հնագիտական թանգարանի հաւաքածոյին մէջ:

Աղիւսակ 1. Ոսկեդրամներ որոնք ծանօթ էին Սերովբէ Ալիշանի (1885) եւ Կարապետ Յ. Բասմաջեանի (1936)

Լեւոն Ա-ի ոսկեայ դահեկան մէկ առիւծով (3 կտոր)
Լեւոն Ա-ի ոսկեայ դահեկան երկու առիւծով (5 կտոր)
Լեւոն—Հեթում ոսկեայ դահեկան (2 կտոր)
Կոստանդին Ա-ի ոսկեայ դահեկան (2 կտոր)¹⁸
Ընդամէնը՝ 12 կտոր:

1995ին, Ե. Թ. Ներսէսեան հրատարակեց հայկական դրամներու վերաբերեալ իր գիրքը¹⁹: Հոս Լեւոն Ա-ի այլ տիպ կրկնառիւծ ոսկեայ կէս դահեկան մը աւելցուեցաւ ծանօթ չորս տեսակ ոսկեդրամներու շարքին վրայ²⁰:

Անոնք որ անձնապէս քննած են հայ ոսկեդրամները, կը պնդեն, թէ նոյն կաղապարները գործածուած են հատանելու նոյն տիրակալի նոյն տեսակի ոսկեդրամները: Օրինակի համար՝ Սերովբէ Ալիշան²¹ եւ Զարեհ Պտուկեան²² կը յայտարարեն թէ Լեւոն Ա-ի մէկ առիւծով բոլոր ոսկեդրամները նոյն տեսակ են: Պտուկեան հասաւ իր եզրակացութեան դրամներու ալիւմինիումէ նմանահանուածութիւնները քննելէ յետոյ: Վերջերս նման դիտողութիւն մը ստացուեցաւ Փարիզէն, Bibliothèque Nationale de Franceէն²³:

Պատրաստելու համար իր Կիլիկեան Հայաստանի Դրամները գիրքը, Պտուկեան ստացաւ հազարաւոր դրամներու ալիւմինիում թուղթէ նմանահանութիւնները, որոնց շարքին՝ նաեւ ոսկեդրամներունը: Պտուկեան գրանցեց եւ դասաւորեց Լեւոն Ա-ի հինգ կրկնառիւծ ոսկիէ դահեկան²⁴: Հիմնուած այս ալիւմինիումի նմանահանութեանց քննութեան վրայ, Պտուկեան յայտարարեց, թէ բոլոր կրկնառիւծ ոսկիէ դահեկանները կոխուած են նոյն կնիքներէն²⁵: Սակայն, 1989ին Կիլիկեան Հայաստանի Դրամները գիրքին վերահրատարակութենէն ետք, Լեւոն Ա-ի կրկնառիւծ ոսկիէ կէս դահեկան մը եւս յայտնաբերուեցաւ Յիւրիխի մէջ²⁶: Թէեւ այս մէկը կրկնառիւծ ոսկեդրամ մըն է, սակայն ունի տարբեր խորագրութիւններ, փոքր ու տարբեր կնիքներ եւ ունի ծանօթ նմուշներուն կէս կշիւքը (6.22:2.45): 1959ին, Լեւոն Ա-ի այլ կրկնառիւծ ոսկեդրամ մը ծախուեցաւ Ֆրանքֆորթի մէջ: Վաճառքի քաթալոկը չէր տպած ոսկեդրամին նկարը կամ խորագրութիւնները՝ ան դասաւորուած էր իբրեւ կէս դահեկան (դասաւորութիւն IIIբ, 3.40 կրամ)²⁷:

Հեթում—Լեւոն ոսկեդրամի վերագրումը եղած է վիճելի հարց մը: Գալիմքեարեան²⁸, Բասմաջեան²⁹, Պերճ Մ. Կարապետեան³⁰ եւ Հայր Օգոստինոս Սեբուկեան³¹ զայն վերագրած են Հեթում Ա- եւ Լեւոն Բ- թագաւորներուն (ուրեմն Լեւոն Բ-), քանի որ երկուքը, իբրեւ Հայր ու որդի, միատեղ իշխեցին տարուան մը համար, Լեւոն Բ-ի տարագրութենէն վերադարձէն յետոյ³²: Պտուկեան յառաջ կը քշէ այն տեսակէտը, թէ «Լեւոն» արձանագրուած կողմը նման է որոշ արծաթ դրամներու՝ կոխուած Լեւոն Ա-ի

կողմէ. հետեւաբար, ոսկեղրամը կրնայ ըլլալ Լեւոն Ա. եւ Հեթում Ա-ի ոսկեղրամ մը միայն³⁵: Վիճելի կացութիւնը պիտի շարունակէ նաեւ ապագային մինչեւ որ նոր դրամագիրտ մը կատարուի, որուն համեմատութիւնն ու պարունակութիւնը յաւելեալ լոյս սփռեն այս նիւթին վրայ: Առայժմ միայն երկու Լեւոն-Հեթում ոսկիէ դահեկաններ գոյութիւն ունին: Երկուքն ալ հատանուած են նոյն կաղապարներէն:

Կոստանդին Ա.ի ոսկիէ դահեկանները միակ ոսկեղրամներն են, որոնց համար նոր կաղապարներ փորագրուած են. յատկապէս ոսկեղրամի մը համար: Ետեւի կողմին պատկերատիպը եզակի է եւ այս միակ անգամն է, որ երեք աշտարակներով ամրոց մը (Ստոյբերդը) դրուագուած է հայ թագաւորի մը դրամին վրայ: Այսպիսի միայն երկու ոսկեղրամներ գոյութիւն ունին: Ըստ Պտուկեանի – իրենց ալիւմինիում թուղթէ նըմանահանութիւններէն դատելով – երկուքն ալ նոյն կաղապարներով կտրուած են³⁴:

Ինչպէ՞ս գիտնանք թէ այս դրամները կեղծ չեն³⁵: Նոյն կաղապարները գործածուած են հատանելու նոյնատիպ ոսկեղրամները եւ բոլորն ալ կոխուած են գործածելով Լեւոն Ա. եւ Հեթում Ա. թագաւորներու արծաթ դրամներուն կնիքները: Տարիներու ընթացքին ոսկեղրամներու վաւերականութեան վերաբերեալ որոշ ապացոյցներ հաւաքուած են: Վիեննայի Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին մէջ կան երկու ոսկեղրամներ: Երջանկայիշատակ Գեր. Աբրահայր Մ. Հապոզեան Վիեննայի Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին երկու ոսկեղրամներն ալ քննել տուած է եւ մասնագէտները զանոնք նկատած են հարազատ³⁶: Դոկտ. Փոլ Պալոկ քննած է Վենետիկի Ս. Ղազարու Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին ոսկեղրամները եւ վստահ է անոնց վաւերականութեան³⁷: E. Button իր վաճառքի քաթալոկին մէջ կը յայտարարէ, «Բրիտանական Թանգարանը դրամը վճռած է հարազատ»³⁸: Bibliothèque Nationale de Franceի Փրանսացի դրամագէտները երբեք չկասկածեցան իրենց Թանգարանին մէջի Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկաններուն հարազատ ըլլալուն³⁹: Իրականութեան մէջ, Ելումպերժէ չափազանց խանդավառուեցաւ հայկական հարազատ ոսկիէ դահեկան մը ունենալուն համար: Ակնարկելով Լեւոն Ա. թագաւորի մէկ առիւծով ոսկիէ դահեկանին, ան կը գրէ. «... Կրնամ այսօր հաստատել՝ թէ հայ թագաւորական ոսկեղրամն այժմ՝ եւ ինչպէս հարկն էր գոյութիւն ունէր. վասն զի ես հայ ոսկեղրամի վաւերական օրինակ մ'ունիմ: Երջանիկ քախտ մը տէր ըրաւ զիս ուրբիւնեան դրամագիրտութեան սոյն գոհարին, ...»⁴⁰: Այս յօդուածին հեղինակը անձնապէս քննեց նախապէս Կելրեքեանի պատկանող Լեւոն Ա.ի կրկնառիւծ ոսկիէ կէս դահեկանը. անկասկած ոսկեղրամը⁴¹ հարազատ է: Վերջիվերջոյ, բոլոր հայ դրամագէտները առանց բացառութեան երբեք չկասկածեցան

Կոստանդին Ա-ի ոսկեդրամներուն վաւերականութեան մասին⁴³:

Հայր Միքայէլ Չամչեանցի Պատմութիւն Հայոց եռահատոր գիրքին մէջ, յիշուած է, թէ «... քանի մը դրամք ոսկեոյ եւ արծաթոյ, որք մինչեւ ցայժմ գտանին առ ոմանս՝ հայերէն գրով զրոշմեալ. որոց յոմանս՝ ի մի կողմն փորագրեալ է կերպարան առիւծու, եւ ՚ի միւսն պատկեր արքայի՝ կա՛մ առանձինն, եւ կամ հանդերձ թագուհեաւ. եւ յոմանս եւս ձեւ խաչի»⁴³:

1745ին առաջին անգամ հրատարակութեան մը մէջ հայատառ արծաթ դրամ մը նկարագրուեցաւ⁴⁴: 1850ին էր, երբ առաջին անգամ հայ ոսկեայ դրամ մը նկարագրուեցաւ: Մարդ կը մղուի մտածելու, թէ նման պայմաններու ներքեւ, հազիւ թէ կեղծ հայկական դրամներ պատրաստուէին, երբ շատ քիչ հաւաքորդներ կը հետաքրքրուէին հայկական դրամներով ու չափազանց քիչ տեղեկութիւն գոյութիւն ունէր հայկական դրամներու մասին:

Եթէ համարենք որ այս ոսկեդրամները կոխուած են իրրեւ յուշադրամներ, դրուագուած՝ յիշատակելու որոշ դէպք մը կամ՝ թագաւորին կողմէ ընծայուելիք յուշանուէր մը եղած են քան՝ թողարկուած արծաթ դրամներու նման շրջանառութեան կամ ալ վաճառականական ձեռնարկներու համար, այն ժամանակ բոլորն ալ կը պատշաճին Կիլիկեան Հայաստանի դրամագիտութեան կառոյցին:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՂԻՍԱԿ 1-Ի ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1. Լեւոն Բ-ի ոսկիէ դահեկան, փճացած է 1831 թուականի Բերայի հրդեհին: Ցարդ այս ոսկեդրամին նմանող այլ նմուշ մը յայտնաբերուած չէ:

2. Կոստանդին Ա-ի ոսկիէ դահեկան, Վենետիկի Ս. Ղազարու Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին մէջ կը պահպանուի (ղասաւորութիւն V-ը)⁴⁵:

3. Լեւոն Ա-ի ոսկիէ դահեկան, Ճանիկ Ամիրային պատկանած է: Ուր գտնուիլը անյայտ կը մնայ:

4. Լեւոն Ա-ի ոսկիէ դահեկան, Կեսարիոյ վանքի մը վարդապետին պատկանած է: անցած է ուրիշի մը ձեռքը: Ուր գտնուիլը անյայտ կը մնայ:

5. Լեւոն Ա-ի կրկնառիւծ ոսկիէ դահեկան, նուիրուած է Սերովբէ Ալիշանի կողմէ Վենետիկի Ս. Ղազարու Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին (ղասաւորութիւն II-ը)⁴⁶:

6. Լեւոն Ա-ի մէկ առիւծով ոսկիէ դահեկան, նախապէս Կիւսթաւ Շլումպերթէի հաւաքածոյին մաս կը կազմէր: 1979 թուականին Պտուկեան փոխանակեց Շլումպերթէի այս դրամը, Bibliothèque National de

Franceի գիշերով տասը իշխանական ու թագաւորական ուրբինեան դրամներ: 1983 թուականին Պտուկեան այս դրամը նուիրեց Երեւանի Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի հաւաքածոյին (աղիւսակ 2, 1.գ)⁴⁷:

7. Լեւոն Ա.ի կրկնաուիւծ ոսկիէ դահեկան մը կեսարիայէն. ծախուած է Փարիզի դրամահաւաք-վաճառական Ռոյէնի ձեռքով: Ըստ Պտուկեանի, այս ոսկեդրամը կրկին վաճառուած է եւ միացած Վիեննայի Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին կամ ալ՝ Նուարդ Գափամաջեանի հաւաքածոյին⁴⁸: Գափամաջեանի ոսկիէ դահեկանը տեղեկագրուած է Պտուկեանի կողմէ իր Կիլիկեան Հայաստանի Դրամները գիրքին⁴⁹ մէջ եւ S. Boutin⁵⁰ տուած է այս դրամի մանրամասն նկարագրութիւնը: Սակայն այս ոսկեդրամը չէր ցուցակագրուած Գափամաջեանի դրամագիտական հաւաքածոյին աճուրդի քաթալոկին մէջ⁵¹: Ուր գտնուիրը անյայտ կը մնայ (աղիւսակ 2, II.ե կամ II.ա, կարգով):

8. Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկան կեսարիայէն. հաւանաբար վաճառուած է Ռոյէնի ձեռքով: Ուր գտնուիրը անյայտ կը մնայ:

9. Լեւոն Ա.ի կրկնաուիւծ ոսկիէ դահեկան. դիտողութիւն 7ի նման: Ըստ Սեքուլեանի ազնուութեամբ տրամադրած տեղեկութեան, բերանացի հաղորդուած վանքի աւագ միաբաններէն, երկու ոսկեդրամներն ալ Եգիպտոսէն ճամբորդած են Վիեննայի Մխիթարեան Թանգարանը⁵²:

10. Լեւոն—Հեթում ոսկիէ դահեկան, Վենետիկի Ս. Ղազարու Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին մէջ կը պահպանուի (աղիւսակ 2, IV.բ)⁵³:

11. Լեւոն Ա.ի մէկ աուիւծով ոսկիէ դահեկան, Bibliothèque Nationale de Franceի դրամագիտական հաւաքածոյին մէջ կը պահպանուի (աղիւսակ 2, I.բ): 1984 թուականին Տետէեան մանրամասնութեամբ նկարագրած է այս ոսկեդրամը⁵⁴:

12. Լեւոն—Հեթում ոսկիէ դահեկան, Վիեննայի Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին մէջ կը պահպանուի (աղիւսակ 2, IV.ա): Սեքուլեան մանրամասն քննարկած է այս դրամը իր յօդուածներէն մէկուն մէջ⁵⁵:

13. Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկան, առաջարկուած է Bibliothèque Nationale de Franceի բայց չէ գնուած: Ուր գտնուիրը անյայտ կը մնայ:

14. Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկան Ռոյէնի մօտ, շատ հաւանաբար վերածախուած է: Ուր գտնուիրը անյայտ կը մնայ:

15. Լեւոն Ա.ի մէկ աուիւծով ոսկիէ դահեկան, նախապէս պատկանած է Նշան Գալլպօճեանին, ապա միացած է Գ. Պաղտատլեանի հաւաքածոյին: Պտուկեան գնեց Պաղտատլեանի հաւաքածոն 1968 թուականին⁵⁶: 1984 թուականին Պտուկեան նուիրեց Պաղտատլեանի Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկանը Նիւ Եորքի Ամերիկեան Դրամագիտական Ընկերակցութեան Թան-

գարանի (American Numismatic Society) հաւաքածոյին (աղիւսակ 2, I-ա)⁶⁷:

16. Լեւոն Ա-ի ոսկիէ դահեկան Հայկազն Հապէշեանի հաւաքածոյին մէջ: Ուր գտնուիլը անյայտ կը մնայ:

17. Կոստանդին Ա-ի ոսկիէ դահեկան, Իսթանպուլի Հնագիտական Թանգարանի հաւաքածոյին մէջ կը պահպանուի (աղիւսակ 2, V-ա)⁶⁸:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Վերի դիտողութեանց եւ ոսկեղրամներու 1995ի իրավիճակին վրայ (աղիւսակ 2) հիմնուելով, աղիւսակ 1էն վեց ոսկեղրամի ուր գտնուիլը չենք կրնար բացատրել (թիւ 3, 4, 8, 13, 14 եւ 16): Այսօր մենք ծանօթ ենք աղիւսակ 1ի տաս ոսկեղրամներուն, որոնք կը գտնուին Թանգարաններու կամ սեփական հաւաքածոներու մէջ (թիւ 2, 5, 6, 7, 9, 10, 11, 12, 15 եւ 17): Ոսկեղրամներու մեր դասաւորութիւնը կը ցուցակագրէ տասնչորս կտոր դրամ: Ուրեմն այս վեց ոսկեղրամներէն որեւէ մին կրնայ ըլլալ չորս դրամներէն մէկը (14-10=4. II-դ, II-դ, III-ա, եւ III-բ):

Խաշատուր Մուշեղեան հրատարակած է Լեւոն Ա-ի կրկնաուծ ոսկիէ դահեկան մը էրմիթաթի Թանգարանի հաւաքածոյէն, 1965 թուականին (աղիւսակ 2, II-դ)⁶⁹: Լեւոն Ա-ի այլ կրկնաուծ ոսկիէ դահեկան մը կը պահպանուի Bibliothèque Nationale de Franceի դրամագիտական հաւաքածոյին մէջ⁷⁰: Հաւանականութիւնը կայ, որ Bibliothèque Nationale de Franceի դրամը կրնայ Ռոյէն հաստատութենէն գնուած ըլլալ (աղիւսակ 2, II-դ), քանի որ դրամի ծագման ստուգարանութիւնը մեզ կ'առաջնորդէ դարձեալ Շլումպերթէի հաւաքածոն⁷¹: Մենք ունինք Լեւոն Ա-ի երկու ոսկիէ կէս դահեկաննոցներ, որոնք ծախուեցան քսաներորդ դարու երկրորդ կիսուն. Buttonի դրամը՝ ծախուած 1959ին եւ Sternberg⁷²ի դրամը՝ ծախուած 1989ին: Վերջինս գնուեցաւ 1989 թուականին, ապա աճուրդով ծախուեցաւ 1995 թուականին Ժ. Կելրեքեանի կողմէ⁷³: E. Buttonի ծախած դրամին ուր գտնուիլը անյայտ կը մնայ (աղիւսակ 2, III-բ): Նախապէս Կելրեքեանի պատկանող ոսկիէ կէս դահեկանը գնուեցաւ Լ.Ա. Էտրմզի կողմէ (աղիւսակ 2, III-ա): Աճուրդի քաթալոկներուն մէջ Button եւ Sternberg որեւէ տեղեկութիւն չեն հայթայթած իրենց դրամներու սկզբնաղբիւրի մասին: Որեւէ տուեալ չէ հրատարակուած որ այս չորս դրամները համաժամանեցուն աղիւսակ 1ի ցանկին հետ (տես՝ աղիւսակ 2):

Չարմանալիորէն, մենք ունինք Լեւոն Ա-ի մէկ առիւծով ոսկիէ դահեկան մը, որ առաջարկուած է Bibliothèque Nationale de Franceի, բայց մերժուելով չէ գնուած (թիւ 13): Ոչ միայն այս դրամին ուր գտնուիլը յայտնի չէ, այլ նաեւ չէ ցուցակագրուած մեր դասաւորութեան մէջ, քանի որ չունինք ստոյգ տեղեկութիւն իր տեղադրումի մասին: Աղիւսակ 1ին

Դաս.	Տիրակալ	Դրամի տիպ	Վիճակ	Տեղադրում (1995)	Թիւ
I. ա	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	Նիւ Եորք (ANS)	15.
I. բ	Լեւոն Ա.	Մէկ առիւծ	✓	Փարիզ (BNF)	11.
I. գ	Լեւոն Ա.	Մէկ առիւծ	✓	Երեւան (ՀՊՊԹ)	6.
	Լեւոն Ա.	Մէկ առիւծ	?	?	13.
II. ա	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	(Նախկին Ն. Գափամաջեան) ?	7.
II. բ	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	Վենետիկ (Միւ. Թ.)	5.
II. գ	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	էրմիթափ	
II. դ.	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	Փարիզ (BNF)	
II. ե	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	Վիեննա (Միւ. Թ.)	9.
	Լեւոն Ա.	? առիւծ	?	?	3.
	Լեւոն Ա.	? առիւծ	?	?	4.
	Լեւոն Ա.	? առիւծ	?	?	8.
	Լեւոն Ա.	? առիւծ	?	?	14.
	Լեւոն Ա.	? առիւծ	?	?	16.
III. ա	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	Լ.Ա. էտրմզ	
III. բ	Լեւոն Ա.	Կրկնառիւծ	✓	(Նախկին Button) ?	
IV. ա	Լեւոն-Հեթում		✓	Վիեննա (Միւ. Թ.)	12.
IV. բ	Լեւոն-Հեթում		✓	Վենետիկ (Միւ. Թ.)	10.
	Լեւոն Բ.		x	x	1.
V. ա	Կոստանդին Ա.		✓	Իսթանպուլ (Հն. Թ.)	17.
V. բ	Կոստանդին Ա.		✓	Վենետիկ (Միւ. Թ.)	2.

Աղիւսակ 2. Իրավիճակ հայ ոսկեղրամներու (1995)

մէջ Լեւոն Ա.-ի մէկ առիւծով չորս ոսկիէ դահեկաններ ցուցակագրուած են (թիւ 6, 11, 13 եւ 15): Սակայն մեր դասաւորութիւնը ունի միայն երեք հատ մէկ առիւծով ոսկիէ դահեկաններ: Ո՞ւր է չորրորդ օրինակը: Ո՞ւր տեղադրուեցան նախապէս Գափամաջեանի եւ Buttonի պատկանող ոսկեղրամները:

Հարիւրտաս տարի անցած է Սերովբէ Ալիշանի հայ ոսկեղրամներու ցանկէն եւ վախճուեն տարի՝ Բասմաջեանի նոյն ցանկը արդիականացնելէն: Հակառակ յաջորդող երկար շրջանին, մենք կրցած ենք ցուցակա-

գրել միայն տասնչորս ծանօթ դրամներ: Աղիւսակ Կիպարունակութիւնը կը ցուցակագրէ տասնօթ դրամ, որոնցմէ մին փճացած է 1831ի հրդեհին: Այս կը ձգէ մեզ լրիւ երկու դրամ վիճելի ծագումով: Ասոնցմէ մին՝ մէկ առիւծով ոսկիէ դահեկան մըն է (թիւ 13): Արդեօք կարելի՞ է, որ Գալըպ-ճեան—Պաղտատլեան—Պտուկեան— Ամերիկեան Դրամագիտական Ընկերակցութեան (ANS) դրամը (թիւ 15) եւ Bibliothèque Nationale de Franceի առաջարկուած դրամը (թիւ 13) նոյն ոսկեգրամն ըլլան: Հաւանա-կանութիւնը կայ, որ ասոնցմէ միքանին, կամ նուազագոյն երկու ոսկիէ դահեկան (կրկնառիւծ) (թիւ 3, 4, 8, 14 եւ 16), զորս չենք կրնար բացայայտել, կրկնութիւններ ըլլան: Այս կրնայ բացատրել տեղի ունեցած անհա-մաձայնութիւնը տասնվեց դրամով եւ մեր տասնչորս դրամով ցանկերուն միջեւ: Ըստ երեւոյթին, այս անյայտ դրամները հանրային թանգարանի մը մէջ ջնջն: Եթէ գոյութիւն ունին սեփական հաւաքածոներու մէջ, հաւա-նարար հաւաքորդները պիտի նախընտրէին իրենց ունեցած հազուագիւտ եւ թանկագին հնադրամները գաղտնի պահել ու չվերածել հանրային գիտելիքներու: Մենք միայն կրնանք յուսալ, որ մօտիկ ապագային այս ոսկեգրամները պիտի վերագտնուին եւ գաղտնութեան շղարշը վերջնա-կանօրէն վերցուի այս նիւթին վրայէն⁸⁵:

1995 ԹՈՒԱԿԱՆԻ ԴԱՍԱՌՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՍԿԵԳՐԱՄՆԵՐՈՒ

Գծագրութիւններ նախընտրուեցան այս յօդուածի պատկերագրա-դումին համար, քանի որ նոյն պատկերատիպի պատկանող դրամները հատանուած են նոյն կաղապարներէն⁸⁶:



Նկար I. Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկան, մէկ առիւծ

I. Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկան, մէկ առիւծ

Երես.— Լեւոն թագաւորը դիմահայեաց բազմած է առիւծագարդ գահին, թագակիր է եւ ուսերուն վրայ արքայական թիկնոց կը կրէ: Ան աջ ձեռքով խաչ մը կը բռնէ, իսկ ձախով՝ շուշան մը: Իր ոտքերը կը հանգչին պատուանդանի մը վրայ:

Շրջագրութիւն՝ + ԼԵՒՈՆ ԹԱԳԱՌՐ ՀԱՅՈՑ

Կոնակ.— Դիմահայեաց թագակիր առիւծ մը դէպի ձախ դարձած,

աջ թաթով կը բռնէ կրկնաթեւ խաչ մը: Առիւծի ձախին՝ "h" դաշտի նշանագիրը:

Շրջագրութիւն՝ + **ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏԻՍՈՅ**

Կշիռք եւ գտնուած վայրեր. –

ա. 5.40 կ. (ԿՀԴ 5, ACV 253) American Numismatic Societyի հ.բծ.

բ. 5.33 կ. Bibliothèque Nationale de Franceի հ.բծ.

գ. 4.80 կ. Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի հ.բծ.



Նկ. II. Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկան, կրկնառիւծ

II. **Լեւոն Ա.ի ոսկիէ դահեկան, կրկնառիւծ**

Երես. – Թագաւորը բազմած է գահին, նախորդին նման:

Շրջագրութիւն՝ + **ԼԵՒՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ**

Կոնակ. – Կրկնաթեւ երկար խաչ մը, զետեղուած՝ երկու կանգնած առիւծներու միջեւ, կոնակ կոնակի եւ զլուխնին ետ դարձուցած:

Շրջագրութիւն՝ + **ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏԻՄՈՅ**

Կշիռք եւ գտնուած վայրեր. –

ա. 7.09 կ. (ԿՀԴ 6, ACV 254) նախկին Գափամաջեանի հ.բծ.

բ. 7.00 կ. Վենետիկի Մխիթարեան Թանգարանի հ.բծ.

գ. 6.9 կ. Էրմիթաժի Թանգարանի հ.բծ.

դ. 6.33 կ. Bibliothèque Nationale de Franceի հ.բծ.

ե. 6.25 կ. Վիեննայի Մխիթարեան Թանգարանի հ.բծ.



Նկ. III. Լեւոն Ա.ի ոսկիէ կէս դահեկան, կրկնառիւծ

III. **Լեւոն Ա.ի ոսկիէ կէս դահեկան, կրկնառիւծ**

Երես. – Թագաւորը բազմած է գահին, նախորդին նման:

Շրջագրութիւն՝ + **ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ**
 Կոնակ.— *Ուաչ մը երկու առիւծներուն միջեւ նախորդին նման:*
 Շրջագրութիւն՝ + **ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ**
 Կշիռք եւ գտնուած վայրեր.—
 ա. 2.45 կ. (ACV 255) Լ.Ա. Էտրմզի հւթ.
 բ. 3.40 կ. (ACV 255?) Նախկին E.Buttonի 101-422a



Նկ. IV. ԼԵՒՈՆ-ՅԵՐՈՒՄ ՈՍԿԻՏ ՂԱԽԵԿԱՆ

IV. ԼԵՒՈՆ—ՀԵԹՈՒՄ ՈՍԿԻՏ ԴԱՏԵԿԱՆ
 Երես.— Լեւոն թագաւորը դիմաւայեաց բազմած է առիւծազարդ գահին, թագակիր է եւ ուսերուն վրայ արքայական թիկնոց ունի: Ան աջ ձեռքով խաչ մը կը բռնէ, իսկ ձախով՝ շուշան մը: Իր ոտքերը կը հանգչին պատուանդանի մը վրայ: Բայց ամբողջ պատկերատիպը, ներառեալ թագաւորին թագը, շրջապատուած է հաստատուն շրջանակով մը եւ շուշանին ու խաչին տակը կան երեքական կէտեր: (Ձննէ թագաւորի դիմադիծին, խաչին ու շուշանին փոփոխութիւնները եւ համեմատէ նկար I, II եւ IIIի երեսներուն հետ:)

Շրջագրութիւն՝ + **ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ .+ ՀԱՅ*ՈՑ+**
 Կոնակ—*Թագակիր առիւծ մը դէպի աջ դարձած, ձախ թաթով կը բռնէ խաչ մը:*

Շրջագրութիւն՝ + **ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ**
 Կշիռք եւ գտնուած վայրեր.—
 ա. 5.30 կ. (ԿՀԴ 7, ACV 315) Վիեննայի Մխիթարեան Թանգարանի հւթ.
 բ. 5.85 կ. Վենետիկի Մխիթարեան Թանգարանի հւթ.



Նկ. V. ԿՈՍՏԱՆՊՈՒԼՆՈՍ Ա.Ի ՈՍԿԻՏ ՂԱԽԵԿԱՆ

V. Կոստանդին Ա-ի ոսկիէ դահեկան

Երես.— Կոստանդին թագաւորը ձիավար, դիմահայեաց դէմքով, թագակիր է, դէպի աջ դարձած: Ան սանձը կը բռնէ ձախ ձեռքով, աջ ձեռքով՝ սուր մը:

Շրջագրութիւն՝ + ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԳ ՀԱՅՈՑ

Կոնակ.— Երեք աշտարակներով բերդ մը:

Շրջագրութիւն՝ + ՍՍՈՑ ԲԵՐԴՆ Է ԹԱԳԱՄ

Աշխոյք եւ գտնուած վայրեր.—

ա. 3.65 կ. (ԿՀԴ 8, ACV 414) Իսթանպուլի Հնագիտական
Թանգարանի հւթծ.

բ. 3.60 կ. Վենետիկի Միսիթարեան Թանգարանի հւթծ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Victor Langlois, "Sur les monnaies des rois arméniens de la Dynastie de Roupène", *Revue Archéologique*, I. VII, 1850 էջ 424, տախ. 148, քիւ 9:
2. Victor Langlois, *Numismatique de l'Arménie au moyen âge*, Փարիզ, 1855, էջ 90–91, տախ. III, քիւ 9:
3. Հ. Սահակ Դեմճեմեան, «Կոստանդին Ա թագաւորին ոսկի դրամը» *Հայ Գրամագիտական Հանդես*, Ա. շրջան, հատ. XIX, Գեկտեմբեր 1993, քիւ 4, էջ 73–75:
4. Նոյն տեղը:
5. Gustave Schlumberger, "Monnaie d'or inédite de Léon II, roi d'Arménie", *Archives de l'Orient Latin*, հատ. I, 1881, էջ 675–678: Հայերէն քարգմանութեան համար տես Հայր Աղեմէս Միսիլեան, *Դասատորութիւն Ռուբենեան Գրամաց*, Վիեննա, 1892, էջ 14–17:
6. Հայր Անտոն Ալիշան, *Սիսուան*, Վենետիկ, 1885, էջ 216, նկար 54:
7. *Նոյն*, էջ 381, քիւ 1:
8. *Նոյն*, էջ 381, քիւ 2:
9. Միսիլեան, էջ 17:
10. Տես՝ ծանօթ քիւ 5:
11. Միսիլեան, էջ 7, 13–18, 24, 29–31, 33, 37, 38, 48, 49, տախ. IV, քիւ 42:
12. *Նոյն*, էջ 13–14:
13. Կ. Յ. Բասմաջեան, *Հայկական Ընդհանուր Գրամագիտութիւն եւ Հայաստանի Վերաբերեալ Գրամներ*, Վենետիկ, 1936, էջ 141–143, 152–153, 164–165:
14. Որոշեցինք Էրմիթաժի Թանգարանի (դասատորութիւն II.գ) եւ Փարիզի Ազգային Մատենադարանի (դասատորութիւն II.դ) ոսկեդրամները աղիսակ 1էն դուրս ձգել, որովհետեւ անոնք Փարիզի մէջ Ռոլլէն Հաստատութեան դրամները կրնային ըլլալ:
15. Rollin et Feuarent, հին դրամներ ու մետալներ վաճառող հաստատութիւն մը եղած է ուշ ԺԹ.—վաղ Ի. դարերուն: Հաստատութիւնը հայկական դրամներ ծախսած է 1864 թուականին: Տես՝ Ե. Թ. Ներսէսեան, *Armenian Numismatic Bibliography and Lit-*

- erature, Lnu Անճելլոս, 1984, քի 397, էջ 161: Այս հաստատության գործունեության վերջին տարին կրնայ եղած ըլլայ 1911 թուականը:
16. Ջարեհ Պ. Պտուկեան, "In Search of an Armenian Gold Coin", *Հայ Դրամագիտական Հանդես*, Ա. շրջան, հատ. II, Գեկտեմբեր 1976, քի 3 եւ 4, էջ 22-27, նաեւ՝ *Selected Numismatic Studies*, Lnu Անճելլոս, 1981, էջ 298-301, 504-505:
 17. Ջարեհ Պ. Պտուկեան, «Կիլիկիոյ Թագաւոր Կոստանդին Ա.ի (1298-1299) Գրամները», *Հանդես Ամսօրհայ*, ՀԲ. տարի, Հոկտեմբեր 1958, քի 10, էջ 381-390, նաեւ՝ *SNS*, էջ 334-338. «Լեւոն Ա.ի՞ թէ Լեւոն Բ.ի Գրամներ», *Հանդես Ամսօրհայ*, ՀԳ. տարի, Հոկտեմբեր-Գեկտեմբեր 1960, քի 10-12, էջ 534-536, նաեւ՝ *SNS*, էջ 355-356. "Armenian Gold Coins of the Roupelian Dynasty", *Museum Notes*, հատ. X, 1962, էջ 113-120, նաեւ՝ *SNS*, էջ 63-71. «Կիլիկիոյ Հայ Թագաւորներու Ոսկեդրամները», *Հանդես Ամսօրհայ*, ՀԳ. տարի, Յունուար-Մարտ 1960, քի 1-3, էջ 16-27, նաեւ՝ *SNS*, էջ 344-350. "The Gold Coins", *Coinage of Cilician Armenia*, American Numismatic Society, Numismatic Notes and Monographs, քի 147, Նիւ Եորք, 1962 էջ 68-75 եւ՝ ստոր վերամշակած հրատարակութիւնը՝ *Coinage of Cilician Armenia*, Բոննքփրսթ, 1979, նաեւ՝ «Ոսկի դրամներ», *Կիլիկիան Հայաստանի Դրամները*, Վիեննա, 1963, էջ 74-83. «Հայ Դրամագիտութեան Մութ Էջերը», *Քազմավէպ*, հատ. ԸԼ., 1972, քի 2-3, էջ 291-302, նաեւ՝ *SNS*, էջ 438-450. "In Search of an Armenian Gold Coin", եւ նոյնին հայերէնը՝ «Հայ Ոսկեդրամի Մը Հետազոտումը», *Հայ Դրամագիտական Հանդես*, Ա. շրջան, հատ. II, Գեկտեմբեր 1976, քի 3 եւ 4, էջ 22-27, նաեւ՝ *SNS*, էջ 298-301 եւ 504-505:
 18. Պտուկեան, *Coinage*, էջ 130, քի 5-8. *Կիլիկիան*, էջ 130, քի 5-8:
 19. Ե. Թ. Ներսէսեան, *Armenian Coins and Their Values*, Lnu Անճելլոս, 1995:
 20. *Նոյն*, էջ 109, քի 253-255, էջ 124, քի 315, էջ 149, քի 414:
 21. Սիպիլեան, էջ 13-14:
 22. Պտուկեան, «Կիլիկիոյ Հայ» եւ «Ոսկի Գրամներ»:
 23. Mme Dominique Gerin, Փարիզի Bibliothéque Nationale de Franceի հին դրամներու բաժնէն, կը տեղեկագրէ, թէ Նուարդ Գափամաջեանի նախկին ոսկեայ դահեկանը, Boutinի գիրքին տախտակներէն, բաղդատուեցաւ Bibliothéque Nationale de Franceի Լեւոն Ա. թագաւորին կրկնաթիւծ ոսկիէ դահեկանին հետ, եւ ի յայտ եկաւ որ երկուքն ալ ունին պատկերատիպի եւ մետաղի զարմանալի նմանութիւն մը (նամակը թուագրուած է 14 Յունիս 1996):
 24. Պտուկեան, *Coinage*, էջ 130, քի 6:
 25. Պտուկեան, «Կիլիկիոյ Հայ» եւ «Ոսկի Գրամներ»:
 26. Frank Sternberg, *Auktion XII*, Յիւրիխ, 1989, էջ 64, տախ. XXI, քի 452:
 27. E. Button, *Versteigerungs-Katalog Nr. 101*, Ֆրանքֆուրթ, 1959, էջ 18, քի 422a:
 28. Սիպիլեան, էջ 29-31:
 29. Բասմաջեան, էջ 152-153:
 30. Պերճ Մ. Կարապետեան, «Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան Ս. Ղազարու Թանգարանին Հայկական Հին Դրամներու Հաւաքածոները. Ռուբինեան Դրամներ», *Քազմավէպ*, հատոր ԵԺ, Յուլիս-Սեպտեմբեր 1952, քի 7-9, էջ 155-168, մասնատրարար էջ 166, սիւնակ 2:
 31. Հայր Օգոստինոս Սերուլեան, «Լեւոն Բ.ի Օծման Դրամները», *Հանդես Ամսօրհայ*, ՀԳ. տարի, Ապրիլ-Յունիս 1960, քի 4-6, էջ 204-208: 5 Յունիս 1996ին, հեռաձայնով խօսակցութեան մը ընթացքին, Հայր Սերուլեան յիշեց, թէ իր եզրակացութիւնը կը մնայ նոյնը, ոսկեդրամը կը պատկանի Հերոմ Ա.-Լեւոն Բ. թագաւորներուն:
 32. Լեւոն Բ. թագաւորը ոսկեդրամ մը կտրեց նման իր արծաթ նոր դրամներուն. տես՝ Սիպիլեան, էջ 37-38, եւ՝ Ներսէսեան, *Armenian Coins*, էջ 137, քի 367, բայց այս

եզակի դրամը փճացած է Բերայի 1831ի մեծ հրդեհին:

33. Պտուկեան, «Կիլիկիոյ Հայ» եւ «Ոսկի Դրամներ»:
34. Պտուկեան, "In search":
35. Լեւոն Ա. քազատրին պատկանող կեղծ ոսկեդրամներ գոյութիւն ունին: Բոլոր ծանօթ օրինակները կոխուած են նոյն կաղապարներով: Հաւարորդ մը կրնայ ինքզինք պաշտպանել ուսումնասիրելով եւ ճանչնալով կեղծ դրամներու կաղապարները: Յատելալ տեղեկութեանց համար տես Պտուկեան, «Կիլիկիոյ Հայ» եւ «Ոսկի Դրամներ», Ե. Թ. Ներսիսեան "Counterfeit Armenian Coin Detection", էջ 176-190, արտատպուած **Հայ Դրամագիտական Հանդէս**, Ա. շրջան, հատ. XVIII, Յունիս 1992, քիւ 2, էջ 27-32:
36. Պտուկեան, «Կիլիկիոյ Հայ» եւ «Ոսկի Դրամներ»:
37. Նոյն տեղը:
38. Button, էջ 18, քիւ 422a, "Golddinar. Ahnlich wie vorher. (Die Echtheit ist von Britischen Museum in London erklärt worden) 3.4 gr." (Դրամ 221 եւ 222 կը ցուցակագրեն Լեւոն Ա.ի կրկնադիւծ երկու արծաթ դրամներ):
39. Տես՝ ծանօթ քիւ 1, 2 եւ 5:
40. Schlumberger, "Monnaie d'or", էջ 677 « "... Je puis affirmer aujourd'hui que la monnaie d'or royale arménienne a bien et dûment existé, puisque j'en possède un exemplaire authentique. Un heureux m'a mis en possession de ce joyau de la numismatique roubénienne..." հայերէն թարգմանութիւնը՝ Միսիլեան, էջ 16:
41. Classical Numismatic Group, Inc., *Auction* 36, Լենքեսթըր, Փենսիլվեյնիա, 1995, էջ 67, քիւ 714: Բննուած է 18 Օգոստոս 1995ին American Numismatic Associationի 104րդ տարեդարձի համագումարին եւ դրամներու ցուցահանդէսին, Անահայն, Քալիֆորնիա: Ըստ Կերեքեանի, Գոկոտ. Գ. Մ. Մեթրաքի (խնամակալ Հեպըրտեմի Դրամի Սենեակին, Աշմոլիմի Թանգարան, Օքսֆորտ) կրցած է բննել ոսկեդրամը եւ զայն կը նկատէ հարազատ դրամ մը:
42. Պտուկեանի ոսկեդրամներուն վերաբերեալ ուսումնասիրութեանց մէջ, այս նիւթի մասին մանրամասն քննարկութիւն մը գոյութիւն ունի: Տես՝ ծանօթ քիւ 22:
Երբ Պերճ Կարապետեան Եւրոպա եր՝ հետեւելու դրամագիտական դասընթացքներու, ինք դասատրեց Փարիզի մէջ Bibliothèque Nationale de Franceի եւ Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան հայկական հաւաքածոները: Իր բնագիրը, գոր պատրաստուած է 1951-1953, եւ կը կոչուի *Monographie des monnaies arméniennes du Cabinet des Médailles de la Bibliothèque Nationale de Paris*, 586 էջ ձեռագիր, կը մնայ անտիպ: Այս քննարկին մէջ զլուխ մը յատկացուած է Կիլիկեան Հայաստանի ոսկեդրամներուն "Les monnaies d'or des Rois rubéniens de Cilicie", էջ 117-129, ուր Կարապետեան դասատրած է մինչեւ 1953 թուականը ծանօթ հայ բոլոր ոսկեդրամները: Ան երբ Ս. Ղազար եր, գրեց նաեւ երկու յօդուած ու հրատարակեց **Քազմապէտ**ին մէջ: Ասոնցմէ մին նուիրուած է կիլիկեան հայոց դրամներուն՝ «Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան Ս. Ղազարու Թանգարանին Հայկական Հին Դրամներու Հաւաքածոները. Ռուբինեան Դրամներ», **Քազմապէտ**, հատ. ԴԺ., Յունիս-Սեպտեմբեր 1952, քիւ 7-9, էջ 155-158: Հոս Կարապետեան կը յայտարարէ, թէ «Անքի հաւաքածոյին մէջ կայ Հեթում Ա. եւ Լեւոն Բ.ի անուններով ոսկեայ դրամ մը որ կեղծ է, ինչպէս կեղծ են դժբախտաբար Ռուբինեան համարեա բոլոր ոսկեդրամները, որոնք կը գտնուին զանազան թանգարաններու կամ անհատներու մօտ: Ծրագրած ենք պատրաստել հայկական կեղծ դրամներու (արծաթ կամ ոսկի, Տիգրանեան կամ Ռուբինեան) մասին մանրամասն մեմագրութիւն մը, որպէսզի մեր ազգային զգացումները շահագործող անխիղճ կերծարարները չշարունակեն իրենց շահագործութիւնները: Միակ իսկական ոսկեդրամը կը գտնուի Ս. Ղազարու

- Թանգարանը եւ կը պատկանի Կոստանդին Ա. թագաւորին»: Յարդ Կարապետեանի կողմէ որեւէ աշխատանք յոյս չէ տեսած, ուր քննարկուած ըլլան մէկ հատ կամ բոլոր հայկական կեղծ դրամները:
43. Հայր Միքայէլ Չամչեանց, *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ, 1786, հատ. III, էջ 365:
 44. *Musei Imperialis Petropolitani*, Մանքթ–Փետրպոլի, 1745, հատ. II, էջ 452, տախ. III:
 45. Հայր Տաճատ Եարտըմեան, *San Lazzaro Island, the Monastic Headquarters of the Mekhitarist Order*, Վենետիկ, 1990, էջ 41:
 46. Պտուկեան, «Կիլիկիոյ Հայ», էջ 116 եւ «Ոսկի Դրամներ» էջ 21, կը յայտարարէ, թէ «Ըստ Հայր Գալէմբարեանի եւ ըստ Հայր Ղեւոնդ Ալիշանի, թիւ 5 դրամը կը գտնուի Վենետիկի Միսիթարեան Թանգարանին մէջ, բայց եւ այդ դրամը հող չտեսայ: Ոչ ալ Կարապետեան այս դրամը կը յիշատակէ Վենետիկի Միսիթարեաններուն Ռուբինեան դրամներու շարքին»: Խնդրոյ առարկայ ոսկիէ դահեկանը, նուիրուած Մերովքէ Ալիշանէն, հրատարակած է Հայր Ղ. Ալիշան իր *Սխուման*ի մէջ, էջ 381, թիւ 1:
 47. A.G.D., "Dr. Paul Bedoukian Presents Gold Coin to Armenian Nat'l Historical Museum", *Armenian Reporter*, հատ. XVII, 17 Նոյեմբեր 1983, թիւ 5, էջ 9: Խ. Ա. Մուշեղեան, «Հայկական Ոսկէ Դրամ», *Հայրենիքի Չայն*, 22 Փետրուար 1984, թիւ 8 (968), էջ 4 եւ 5. *Նոր Կիսանք*, հատ. VI, 15 Մարտ 1984, թիւ 12, էջ 6 եւ 31. Bibliothèque Nationale, Cabinet des Médailles registre des échanges du 3 septembre 1979.
 48. Պտուկեան, «Կիլիկիոյ Հայ» եւ «Ոսկի Դրամներ»:
 49. Պտուկեան, *Coinage*, էջ 130, թիւ 6:
 50. S. Boutin, *Collection N.K.; Monnaies des Empires de Byzance...*, Մասսըքիթս, 1983, էջ 463, տախ. LXII, թիւ 1192:
 51. E. Bourgey, *Numismatique Collection N.K.*, Փարիզ, 1992:
 52. Հեռաձայնային իտակցութիւն Հայր Սեբուկեանի հետ, 5 Յունիս 1996 թուականին:
 53. Տես՝ ծանօթ թիւ 45:
 54. Gérard Dédéyan, "Les monnaies d'or Léon II le Magnifique, prince (1187-1198), puis roi (1198-1219) de l'Arménie cilicienne". *Le Club Française de la Médaille*, Bulletin, երկրորդ կիսամեակ, 1984, թիւ 85, էջ 108–111:
 55. Տես՝ ծանօթ թիւ 30:
 56. Չարեհ Պ. Պտուկեան, "Fifty Years of Armenian Numismatics: An Autobiography", *Հայ Դրամագիտական Հանդէս*, Ա. շրջան, հատ. XX, Մարտ 1994, թիւ 1, էջ 13–22:
 57. *Annual Report of the American Numismatic Society for the Period Ending September 30, 1984*, Նիւ Եորք, 1984, էջ 19:
 58. Պտուկեան, *Coinage*, էջ 130, թիւ 8:
 59. Խ. Ա. Մուշեղեան, «Կիլիկեան Հայաստանի Ոսկեդրամ Պետական Էրմիտաժում» *Պատմա–Քանասիրական Հանդէս*, թիւ 2 (29), 1965, էջ 205–206. «Ռուբինեան Ոսկեդրամներէն Յարդ Անտիպ Նմուշ Մը», *Էփիկրաֆիքս Վարդքս*, հատ. XX, 1971, էջ 95–96 (ռուսերէն):
 60. Raymond H. Kévorkian, *Arménie entre Orient et Occident*, Փարիզ, 1996, էջ 244, թիւ 191²?, կու տայ նկարագրութիւնը երկու ոսկիէ դահեկաններու որոնք պահպանուած են Bibliothèque Nationale de Franceի դրամագիտական հաւաքածոյին մէջ:
 61. Ըստ Bibliothèque Nationale de Franceի արխիւներուն, նախապէս Շլուպերժէի հաւաքածոյին մէկ մասն էր, թիւ 1391:
 62. Button, էջ 18, թիւ 422a:
 63. Sternberg, էջ 64, տախ. XXI, թիւ 452:
 64. Classical Numismatic Group, Inc., *Auction 36*, Լենքեսթըր, Փենսիլվանիա, 1995, էջ 67.

թիւ 714 (անուրդով ծախսուած, գին՝ U.S. \$24,200):

65. Կարդացուած՝ Հայ Դրամագիտական Ընկերակցութեան 22 Փետրուար 1997 ժողովին, Փրօ Ռիվերա, Քալիֆորնիա:

Սեր խորին շնորհակալութիւնները՝ Mme Dominique Gerinին, որ մեզի հայթայթեց Bibliothèque Nationale de Franceի արխիւներուն մէջ պահպանուած դրամագիտական բնագիրներուն լուսապատճենները եւ մեր խնդրած անհրաժեշտ տեղեկութիւնը, Հայր Օգոստինոս Սեբուլեանին որ մեզ հետ կիսեց իրեն ծանօթ դրամագիտական տեղեկութիւնը եւ L.Ա. Էտրմզին, որ մեզի արտօնութիւն տուաւ իր անուան գործածութեան համար:

66. Գծագրութիւններ I, II, IV, եւ V արտատպուած են Սիպիլեանէն՝ նկար 6, 7, 15, եւ տախտակ IV-42. գծագրութիւն թիւ III պատրաստուած է հեղինակին կողմէ:

INVENTORY OF CILICIAN ARMENIAN GOLD COINS (Summary)

YEGHIA T. NERCESSIAN

In 1850, Victor Langlois was the first to publish an Armenian gold coin belonging to King Gosdantin I of Cilicia. Subsequently, Gustave Schlumberger and Fr. Ghevond Alishan published two more coins and raised the number of Cilician Armenian gold coins to three.

Fr. Krikoris Kalemkiarian edited Fr. Clement Sibilian's book, *Classification of Roupenian Coins* in 1892, listing 13 Cilician Armenian gold coins therein. In 1936, Karik J. Basmadjian raised the total inventory to 16. If we add to this list the Istanbul Museum gold piece, the inventory grows to 17.

Paul Z. Bedoukian published his book, *Coinage of Cilician Armenia* in 1962. Bedoukian classified 11 gold coins in his corpus. In 1979, in the revised edition of this book, he upgraded the catalogue to 12 gold *tahekans*.

During the second half of the twentieth century, two Armenian gold half *tahekans* were auctioned, the E. Button coin sold in Frankfurt in 1959 and the Frank Sternberg coin sold in Zurich in 1989. The latter was resold in New York in 1995.

Based on the information available, the inventory of Armenian gold coins is 14 pieces: Levon I, one-lion 3 gold *tahekans*; Levon I, two-lion 5 gold *tahekans* and 2 gold half *tahekans*; Levon-Hetoum, 2 gold *tahekans*; Gosdantin I, 2 gold *tahekans*.

One of the coins listed by Fr. Kalemkiarian was destroyed in the 1831 fire. This leaves 16 coins in all. Our catalogue lists 14 gold coins. Hence, we cannot account for two gold coins. It is possible that some of the coins listed by Fr. Kalemkiarian were duplicates. This could explain the discrepancy between the 16 coin list and our 14 coin catalogue.

We can only hope that missing Armenian gold coins will be rediscovered in the near future, and once and for all the shroud of mystery will be lifted from this topic.